№ 193 Հոկտեմբերի 17 (29) 1881 Հոկտեմբերի 17 (29) № 193

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ոտարարաղարացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մասնաւոր եւ հասարակական կեանք։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Բագուից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Թիւրքիայից։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Տաճկական տիպերից։

ՄԱՍՆԱՒՈՐ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔ

—

Ներկայ համարում տպված Բագուի նամակը առիթ է տալիս մեզ հետեւեալ դատողութիւններն անելու։

Ամեն անհատ ունի իր մասնաւոր եւ իր հասարակական կեանքը, իր ներքին եւ իր արտաքին կեանքը։ Իւրաքանչիւրի մասնաւոր կեանքը սահմանափակվում է իր նեղ շրջանում, իր ընտանիքում, իսկ մարդու հասարակական կեանքը որոշվում է այն յարաբերութիւններով, որ մարդն ունի դէպի հասարակութիւնը։

Ամեն կրթված հասարակութեան մէջ մարդու անհատական, ընտանեկան, ներքին կեանքը անմատչելի է լինում հասարակական քննադատութեան համար. ոչ ոք իրան իրաւունք չէ համարում խառնվել մարդու ընտանեկան կեանքի մէջ, յարձակվել այդ կեանքի եղանակի վրա, հրապարակական դատաւոր հանդիսանալ մարդու ներքին, ընտանեկան բարոյականութեան վրա, քանի որ նա չէ դուրս գալիս նեղ, ընտանեկան, անհատական, տնային շրջանակներից եւ չէ շոշափում հասարակութեան բարոյական կամ նիւթական շահերը։ Ընդհակառակն մարդու հասարակական գործունէութեան իւրաքանչիւր քայլը, այսինքն մարդու յարաբերութիւնները դէպի դրսի հասարակութիւնը, լինում են հասարակական ամենախիստ քննադատութեան առարկայ։

Այսպէս է լինում կրթված հասարակութիւնների մէջ։ Իսկ մեզանում ընդհակառակն. մենք անչափ ներողամիտ ենք դէպի մարդկանց հասարակական կեանքը, իսկ իւրաքանչիւրը մեզանից իր իրաւունք է համարում ինքնակոչ դատաւոր հանդիսանալ մարդու ընտանեկան, ներքին կեանքի եղանակի վրա, դատաւոր հանդիսանալ ուրիշի անհատական, անձնական բարոյականութեան վրա։

Այդպիսով մարդու ներքին, ընտանեկան կեանքը, այդ կեանքի եղանակը, մարդու աշխարհայեցողութիւնը, նրա բարոյական եւ կրօնական համոզմունքները,—հասարակութեան ամենախիստ քննադատութեան առարկայ են լինում. իւրաքանչիւրը մեզանից իրաւունք է համարում ուրիշի անհատական բարոյականութեան վրա դատաւոր հանդիսանալ, նրան պատժել մինչև անգամ իր անձնական յարաբերութիւնը նրա հետ փոխելով. իսկ մի մարդ որ, օրինակ, հարստացել է ամենաանարգելի միջոցներով, կոչոպել է ուրիշներին թղթախաղի մէջ, սեփականացրել է ուրիշի կայքը, սուտ թղթադրամով իր համար կարողութիւն է շինել,—այդ տեսակ մարդուն ոչ ոք չէ քննադատում, այդ տեսակ մարդուն ամենքը յարգում և պատում են, այդ տեսակ մարդուն ընարում են մինչև անգամ հասարակական ամենապատուաւոր պաշտօնների վրա։

Աւելորդ է ասել թէ այդ տեսակ հասարակութիւն որքան ընդունակ է որ և է բարոյական, մտաւոր և տնտեսական առաջադիմութեան, աւելորդ է ասել, նոյնպէս, թէ այդ տեսակ հասարակական ընթացքը որքան բարի օրինակ կարող է ծառայել նոյն հասարակութեան նոր, թարմ սերունդի համար։

Ահա մի հայ երիտասարդ, որ համալսարանում ուսում է առնում, վերադառնում է հայ հասարակութեան մէջ. և ի՞նչ է տեսնում նա։ Այն անձինք, որոնք պէտք է պատժվին յանցանքի համար, բռնած ունեն մեր հասարակութեան մէջ ամենապատուաւոր տեղեր...

Պարզ է որ փոքր առ փոքր նրա մէջ էլ կը հաստատվի այն համոզմունքը, թէ կարելի է գործել ամենաանարգելի գործերը, միայն թէ հարստութիւն ձեռք բերվի,—և նա կը յարգվի հասարակութենից։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Հոկտեմբերի 2-ին

Մեր ամբոխի անուան վարկը օտար հասարակութիւնների աչքում վայր գցող գլխաւոր պատճառներից մէկը կարող է համարվել հայ վաճառականներից շատերի անազնիւ վարմունքը օտարների առաջ, նա մանաւանդ մի շատ տխուր երեւոյթ, որ նրանց շրջանում վերջին ժամանակները շատ յաճախ է կրկնվում։ Ցայտնի է, որ Կովկասցի վաճառականների մեծամասնութիւնը երկար տարիներ Ռուսաստանի հետ անմիջապէս առեւտրական յարաբերութիւններ ունենալով և շատերը իրանց հաւատարմութեամբ գրաւելով յայտնի ռուս ֆաբրիկանտների և վաճառականների հաւատը, շատ ժամանակ վերջիններից մեծ քանակութեան ապառիկ ապրանքներ առնելով տեղափոխում են Կովկաս և այդպիսով նա, որի սեպհական կապիտալը հազիւ տասն հազարի է հասնում, կարողանում է տարվայ ընթացքում մի քանի հարիւր հազարների չափ առեւտուր կատարել։ Այդ տեսակ հաւատ ռուսաստանցիների կողմից՝ ի հարկէ անհրաժեշտ է մեր վաճառականների համար, և թանդ արժէ մանաւանդ հայ վաճառականների համար, որոնք այդ հանգամանքով առաւել են օգտվում, քան թէ ուրիշները։ Բայց, դժբաղդաբար, վերջին տարիները ռուսաստանցիները հետզհետէ սկսում են թուլացնել իրանց հաւատը դէպի կովկասցիները, շնորհով մեր մի քանի վաճառականների, այն էլ գրեթէ բացառապէս հայերի, անազնուութեան։ Մի քանի տարիներ շարունակ Ռուսաստանից ապառիկ ապրանքներ բերելով Կովկաս, հայ վաճառականը կանոնաւորապէս վճարում է ամենայն տարի իր պարտքերը մինչև այն ժամանակ, երբ նա արդէն լիովին համոզեցնում է ռուսաստանցիներին իր ազնուութեան մէջ և տակաւին գրաւում նրանց հաւատը։

Այդ ժամանակ հայ վաճառականի ազնուութեան կապանքները բոլորովին թուլանում են և նա մի տարի ևս կապելով մեծ գումարի ապրանք, տեղափոխելով նրան իր հայրենիքը, յանկարծ հրատարակում է իրան պարտատէրերի առաջ անանկացած և իր բոլոր կայքը գրելով մի որ և է մօտ ազգականի կամ բարեկամի անունով, առաջարկում է կրեդիտորներին բաւականանալ մի ռուբլու տեղ 10 կամ 20 կոպէկով, կամ թէ չէ բոլորովին հրաժարվում է նրանց վճարելուց։ Այդպիսի դէպքեր շատ են պատահում։ Այդ, դժբաղդաբար, վերջին տարիները ռուսաստանցիները հետզհետէ սկսում են թուլացնել իրանց հաւատը դէպի կովկասցիները, շնորհով մեր մի քանի վաճառականների, այն էլ գրեթէ բացառապէս հայերի, անազնուութեան։ Մի քանի տարիներ շարունակ Ռուսաստանից ապառիկ ապրանքներ բերելով Կովկաս, հայ վաճառականը կանոնաւորապէս վճարում է ամենայն տարի իր պարտքերը մինչև այն ժամանակ, երբ նա արդէն լիովին համոզեցնում է ռուսաստանցիներին իր ազնուութեան մէջ և տակաւին գրաւում նրանց հաւատը։

Այդ ժամանակ հայ վաճառականի ազնուութեան կապանքները բոլորովին թուլանում են և նա մի տարի ևս կապելով մեծ գումարի ապրանք, տեղափոխելով նրան իր հայրենիքը, յանկարծ հրատարակում է իրան պարտատէրերի առաջ անանկացած և իր բոլոր կայքը գրելով մի որ և է մօտ ազգականի կամ բարեկամի անունով, առաջարկում է կրեդիտորներին բաւականանալ մի ռուբլու տեղ 10 կամ 20 կոպէկով, կամ թէ չէ բոլորովին հրաժարվում է նրանց վճարելուց։ Այդպիսի դէպքեր շատ են պատահում։

Այս ասելով վաճառականը մօտ բերեց կադին ճոխ կերպով ասղնեգործած ոսկեայ թելերով մի բաճկոնակ, որի արժողութիւնը հաւատար էր 2,000 պիաստրի։

Սէլիմ աղան ընդունեց հանդերձեղէնը խորամանկ ժպիտով և նոյն րոպէին ձեռքը դրաւ բաճկոնակի գրպանը, բայց տեսնելով նրա դատարկութիւնը, հանեց այն տեղից իր ձեռքը զգալի անբաւականութիւնով։ Այնուհետև նա դիմեց դէպի բէգը ու հարցրեց։

—Դու ինչ պատասխան ունես քեզ արդարացնելու համար։

—Շատ, պատասխանեց նա. Հասանը ինձ ծաղրածու չինեց. այսպիսի գործողութիւնը արժանի է պատժի և այս պատճառով ես մտադիր չեմ հատուցանել նորան 6,000 պիաստրը։

—Այդ կը վճռվի այն ժամանակ միայն, երբ որ զօրանի հետ կը խորհրդակցեմ, սառնութիւնով պատասխանեց Սէլիմ աղան, և հանելով գրպանից իւղոտած զօրանը՝ սկսեց թերթել այն։

—Ի դէպս, արտաբերեց նա, ընդհատելով զօրանի թերթելը—դու ինձանից ամարանոց էիր կամենում գնել, որի վարձը հատուցանում էիր ինձ 7,000 պիաստր, հիմա վեր առ այն, և ես կը տամ քեզ 10,000-ով։

Լէրովէ-բէգը անբաւականութեամբ ծռեց իր կերպարանքը։ Քո կամքն է, փնթփնթաց նա փոքր ինչ մտածելուց յետոյ։

—Ուրեմն վերջացած է, շտապով հարցրեց կադին։

—Վերջացած է, պատասխանեց տխրութիւնով Լէրովէ-բէգը։

Սէլիմ աղան հենց որ իմացաւ այս՝ նոյն րոպէին սկսեց զօրանից կարդալ վճիռը, ուր ասվում էր թէ՝ ամեն մարդ որ ուղղափառին կաշխատի ծաղրածու դարձնել՝ նա արժանի է սաստիկ պատժի։

—Տեսնում ես, Հասան, ուսերը շարժելով դիրել, թէ այն օրը ինչ օրն է և կարելի է արդեօք իրեն երես լուանալը թէ ոչ։ Ո՛չ, այսօր չորեքշաբթի է, իսկ նա միայն ուրբաթ օրերն է լուանում երեսը, ուրեմն շուտով պէտք է հագնի իր բաճկոնակը ու հոգաթափները, ձգի իր վրա ֆէսը՝ և նրա տուալէտը պատրաստ կը լինի։

Այնուհետև Սէլիմ աղան ուղղորվում է դէպի «դատաստանական դահլիճը», որ մի փոքրիկ ուցած սենեակ է և որի կահ-կարասիքը կայանում է մի բարձից ու գորգից։ Կադին վսեմաբար ծալապատիկ բազմում է բարձի վրա և հրամայում է բերել լցրած ղալիանը և փոքրիկ ըմպանակով էլ պատուան սուրճը։ Այդ միջոցին երկու հակառակ կուսակցութիւնքը պատկառելի կերպով կանգնած են դատաւորի առաջ։

Ատենի բացուելովը մտնում են երկու մահմետականներ, բէգն ու վաճառականը, որ յետ մըղելով երկու բայաներին՝ պահանջելով ասում են կադիին։

—Նախ հարկաւոր է ուղղաւաններին լսել, բայան կարող է սպասել։

Քրիստոնեայքը առանց որ և է ընդդիմութեան, հեռանում են դէպի անկիւնը և մահմետականները սկսում են իրանց գանգաթը։

—Ես Լէրովէ բէգի համար թանկագին հանդերձեղէններ բերի, սկսեց վաճառականը։ Բայց մինչև ցայսօր նորանից չը ստանալով ոչինչ վարձ՝ ես պահանջեցի այն, բայց բէգը փոխանակ խոստացած 8,000 պիաստրի՝ հատուցանում է ինձ 2,000, ասելով որ, իբր թէ ամենքը սկսեցին ծաղրել նորան, երբ որ առաջին անգամ նրեցաւ նա դուրսը նոյն հանդերձով։ Բայց ես կարծում եմ, որ այս իրողութիւնը ոչ ինչ յարաբերութիւն չունի մեր պայմանի հետ. Նայիր, Սէլիմ աղա, ես քեզ համար մի բաճկոնակ բերի, որ համոզվես և տեսնես, որ ապրանքիս մէջ ոչինչ ծիծաղաշարժ բան չը կայ։

Ես Սէլիմ-աղային մի անգամ հարցրի, թէ կարելոր դէպքերին օրէնքի ո՞ր կանոններին ես դիմում։

Սրա վրա կադին կեղծաւոր կերպով պատասխանեց, թէ մեր օրէնքը կայանում է զօրանից, Մուլտկից, սուլթանների զանազան հրամանագիրներից, նախնական վճիռներից և աւանդութիւններից։

Ահա թէ մտքերի ինչ խառնուրդներից և անմտութիւններից, հրամանագրութիւններից և պատուէրներից, որ սրանից հազար տարի առաջ են լոյս տեսել, կադին դուրս է բերում իր վճիռները և այնպէս որ, նրան կարդարացնի, ով որ իրեն մեծ բաղդիշ է տուել։

Նրա գործողութիւնների մասին ճիշտ գաղափար կազմելու համար, ունկնդիր լինենք Սէլիմ-աղային իր դատաստանական պարտաւորութիւնները կատարելիս։

Առաւօտեան մօտ ժամի տասն է, բայց կադին դեռ ևս քաղցր քունն է վայելում, չը նայելով որ ամբողջ մի ժամ է, որ երկու հակառակ կուսակցութիւնքը սպասում են ատենի բացվելուն։ Բայց որովհետև այն երկուսն էլ քրիստոնեայք են, այս պատճառով չիքուքչին (զալեան պատրաստողը) հարկաւոր չէ համարում իր պարոնին անհանգստացնել։ «Անասունները» (բայա նշանակում է՝ անասուն), կարող են սպասել, մտածում է նա ինքն իրան։

Վերջապէս կադին զարթնում է, իրանից թափ է տալիս իր բոլոր կեղտոտութիւնները, որոնց հետ նա անց է կացրել ամբողջ գիշերը, ձգձգվում է ու յօրանջում։ Այնուհետև սկսում է մտաբերել, թէ այն օրը ինչ օրն է և կարելի է արդեօք իրեն երես լուանալը թէ ոչ։ Ո՛չ, այսօր չորեքշաբթի է, իսկ նա միայն ուրբաթ օրերն է լուանում երեսը, ուրեմն շուտով պէտք է հագնի իր բաճկոնակը ու հոգաթափները, ձգի իր վրա ֆէսը՝ և նրա տուալէտը պատրաստ կը լինի։

Այնուհետև Սէլիմ աղան ուղղորվում է դէպի «դատաստանական դահլիճը», որ մի փոքրիկ ուցած սենեակ է և որի կահ-կարասիքը կայանում է մի բարձից ու գորգից։ Կադին վսեմաբար ծալապատիկ բազմում է բարձի վրա և հրամայում է բերել լցրած ղալիանը և փոքրիկ ըմպանակով էլ պատուան սուրճը։ Այդ միջոցին երկու հակառակ կուսակցութիւնքը պատկառելի կերպով կանգնած են դատաւորի առաջ։

Ատենի բացուելովը մտնում են երկու մահմետականներ, բէգն ու վաճառականը, որ յետ մըղելով երկու բայաներին՝ պահանջելով ասում են կադիին։

—Նախ հարկաւոր է ուղղաւաններին լսել, բայան կարող է սպասել։

Քրիստոնեայքը առանց որ և է ընդդիմութեան, հեռանում են դէպի անկիւնը և մահմետականները սկսում են իրանց գանգաթը։

—Ես Լէրովէ բէգի համար թանկագին հանդերձեղէններ բերի, սկսեց վաճառականը։ Բայց մինչև ցայսօր նորանից չը ստանալով ոչինչ վարձ՝ ես պահանջեցի այն, բայց բէգը փոխանակ խոստացած 8,000 պիաստրի՝ հատուցանում է ինձ 2,000, ասելով որ, իբր թէ ամենքը սկսեցին ծաղրել նորան, երբ որ առաջին անգամ նրեցաւ նա դուրսը նոյն հանդերձով։ Բայց ես կարծում եմ, որ այս իրողութիւնը ոչ ինչ յարաբերութիւն չունի մեր պայմանի հետ. Նայիր, Սէլիմ աղա, ես քեզ համար մի բաճկոնակ բերի, որ համոզվես և տեսնես, որ ապրանքիս մէջ ոչինչ ծիծաղաշարժ բան չը կայ։

Այս ասելով վաճառականը մօտ բերեց կադիին ճոխ կերպով ասղնեգործած ոսկեայ թելերով մի բաճկոնակ, որի արժողութիւնը հաւատար էր 2,000 պիաստրի։

Սէլիմ աղան ընդունեց հանդերձեղէնը խորամանկ ժպիտով և նոյն րոպէին ձեռքը դրաւ բաճկոնակի գրպանը, բայց տեսնելով նրա դատարկութիւնը, հանեց այն տեղից իր ձեռքը զգալի անբաւականութիւնով։ Այնուհետև նա դիմեց դէպի բէգը ու հարցրեց։

—Դու ինչ պատասխան ունես քեզ արդարացնելու համար։

—Շատ, պատասխանեց նա. Հասանը ինձ ծաղրածու չինեց. այսպիսի գործողութիւնը արժանի է պատժի և այս պատճառով ես մտադիր չեմ հատուցանել նորան 6,000 պիաստրը։

—Այդ կը վճռվի այն ժամանակ միայն, երբ որ զօրանի հետ կը խորհրդակցեմ, սառնութիւնով պատասխանեց Սէլիմ աղան, և հանելով գրպանից իւղոտած զօրանը՝ սկսեց թերթել այն։

—Ի դէպս, արտաբերեց նա, ընդհատելով զօրանի թերթելը—դու ինձանից ամարանոց էիր կամենում գնել, որի վարձը հատուցանում էիր ինձ 7,000 պիաստր, հիմա վեր առ այն, և ես կը տամ քեզ 10,000-ով։

Լէրովէ-բէգը անբաւականութեամբ ծռեց իր կերպարանքը։ Քո կամքն է, փնթփնթաց նա փոքր ինչ մտածելուց յետոյ։

—Ուրեմն վերջացած է, շտապով հարցրեց կադին։

—Վերջացած է, պատասխանեց տխրութիւնով Լէրովէ-բէգը։

Սէլիմ աղան հենց որ իմացաւ այս՝ նոյն րոպէին սկսեց զօրանից կարդալ վճիռը, ուր ասվում էր թէ՝ ամեն մարդ որ ուղղափառին կաշխատի ծաղրածու դարձնել՝ նա արժանի է սաստիկ պատժի։

—Տեսնում ես, Հասան, ուսերը շարժելով դի-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԱՃԿԱԿԱՆ ՏԻՊԵՐԻՑ

—

Ցաճիկների առտիճանաւորների շրջանի ամենաառաջին տիպը, անկասկած կարող է համարվել կադին (դատաւորը), նա՝ որի գործողութիւնքը արեւելքում առած են դարձել իբրև գաղափար անբարոյականութեան, կաշառակերութեան և խորամանկութեան։ Սորա մասին պատմած վէպերը հազարներով կարելի է համարել, որոնցով և կարելի էր լցնել քանի մի հատոր գրքեր։

Ես առիթ ունեցայ ծանօթանալու Ցաճկաստանի քանի մի գաւառներում ամենատեսակ կադիների պատկերների հետ և այս պատճառով ինձ իրաւունք եմ համարում նկարագրելու կադիի իսկական պատկերը իր յատուկ գոյներով։

Կադիութեան պաշտօնը ստանալու համար շատ ուսում չէ հարկաւոր։ Ով որ երեք տարվայ չափ ուսում է առել որ և է մէդրէսսէի մէջ, կարողանում է զօրանի ընթերցանութիւնը, գրելը և կարդացածի պատմելը, հասկանում է տաճկական լեզուն, նա կարող է կադիութեան պաշտօնին յուսալ։ (Այս նկարագրութեանս մէջ գլխաւորապէս աչքիս տակն ունեմ բօսնիացւոց կադիին, ինչպէս առաւել հետաքրքիր տիպ)։

Մահմուդ փաշայի կենսագրութեան վերաբերութեամբ, մենք իմացանք, թէ ինչ աստիճանի ինչին տեղն է բռնում տաճկերէնի իմանալը, եթէ միայն կադիութեան պաշտօն ստացողը ունի պաշտպաններ։ Այն օրինակ էլ մի հերցեգովինացի կադի, Սալիմ-աղա անունով, բացի իր մայրենի սէրբիական լեզուից, այնքան էր իմանում տաճկականը, որքան որ հարկաւոր էր իրեն համար զանազան բաղդիշները նշանակելու։ Որովհետև, ինչպէս որ ասում էին՝ կադիի բոլոր վճիռները կախումն ունեն բաղդիշների քանակութիւնից։

Ես Սէլիմ-աղային մի անգամ հարցրի, թէ կարևոր դէպքերին օրէնքի ո՞ր կանոններին ես դիմում։

Սրա վրա կադին կեղծաւոր կերպով պատասխանեց, թէ մեր օրէնքը կայանում է զօրանից, Մուլտկից, սուլթանների զանազան հրամանագիրներից, նախնական վճիռներից և աւանդութիւններից։

Ահա թէ մտքերի ինչ խառնուրդներից և անմտութիւններից, հրամանագրութիւններից և պատուէրներից, որ սրանից հազար տարի առաջ են լոյս տեսել, կադին դուրս է բերում իր վճիռները և այնպէս որ, նրան կարդարացնի, ով որ իրեն մեծ բաղդիշ է տուել։

Նրա գործողութիւնների մասին ճիշտ գաղափար կազմելու համար, ունկնդիր լինենք Սէլիմ-աղային իր դատաստանական պարտաւորութիւնները կատարելիս։

Առաւօտեան մօտ ժամի տասն է, բայց կադին դեռ ևս քաղցր քունն է վայելում, չը նայելով որ ամբողջ մի ժամ է, որ երկու հակառակ կուսակցութիւնքը սպասում են ատենի բացվելուն։ Բայց որովհետև այն երկուսն էլ քրիստոնեայք են, այս պատճառով չիքուքչին (զալեան պատրաստողը) հարկաւոր չէ համարում իր պարոնին անհանգստացնել։ «Անասունները» (բայա նշանակում է՝ անասուն), կարող են սպասել, մտածում է նա ինքն իրան։

Վերջապէս կադին զարթնում է, իրանից թափ է տալիս իր բոլոր կեղտոտութիւնները, որոնց հետ նա անց է կացրել ամբողջ գիշերը, ձգձգվում է ու յօրանջում։ Այնուհետև սկսում է մտաբերել, թէ այն օրը ինչ օրն է և կարելի է արդեօք իրեն երես լուանալը թէ ոչ։ Ո՛չ, այսօր չորեքշաբթի է, իսկ նա միայն ուրբաթ օրերն է լուանում երեսը, ուրեմն շուտով պէտք է հագնի իր բաճկոնակը ու հոգաթափները, ձգի իր վրա ֆէսը՝ և նրա տուալէտը պատրաստ կը լինի։

Այնուհետև Սէլիմ աղան ուղղորվում է դէպի «դատաստանական դահլիճը», որ մի փոքրիկ ուցած սենեակ է և որի կահ-կարասիքը կայանում է մի բարձից ու գորգից։ Կադին վսեմաբար ծալապատիկ բազմում է բարձի վրա և հրամայում է բերել լցրած ղալիանը և փոքրիկ ըմպանակով էլ պատուան սուրճը։ Այդ միջոցին երկու հակառակ կուսակցութիւնքը պատկառելի կերպով կանգնած են դատաւորի առաջ։

Ատենի բացուելովը մտնում են երկու մահմետականներ, բէգն ու վաճառականը, որ յետ մըղելով երկու բայաներին՝ պահանջելով ասում են կադիին։

—Նախ հարկաւոր է ուղղաւաններին լսել, բայան կարող է սպասել։

Քրիստոնեայքը առանց որ և է ընդդիմութեան, հեռանում են դէպի անկիւնը և մահմետականները սկսում են իրանց գանգաթը։

—Ես Լէրովէ բէգի համար թանկագին հանդերձեղէններ բերի, սկսեց վաճառականը։ Բայց մինչև ցայսօր նորանից չը ստանալով ոչինչ վարձ՝ ես պահանջեցի այն, բայց բէգը փոխանակ խոստացած 8,000 պիաստրի՝ հատուցանում է ինձ 2,000, ասելով որ, իբր թէ ամենքը սկսեցին ծաղրել նորան, երբ որ առաջին անգամ նրեցաւ նա դուրսը նոյն հանդերձով։ Բայց ես կարծում եմ, որ այս իրողութիւնը ոչ ինչ յարաբերութիւն չունի մեր պայմանի հետ. Նայիր, Սէլիմ աղա, ես քեզ համար մի բաճկոնակ բերի, որ համոզվես և տեսնես, որ ապրանքիս մէջ ոչինչ ծիծաղաշարժ բան չը կայ։

Այս ասելով վաճառականը մօտ բերեց կադիին ճոխ կերպով ասղնեգործած ոսկեայ թելերով մի բաճկոնակ, որի արժողութիւնը հաւատար էր 2,000 պիաստրի։

Սէլիմ աղան ընդունեց հանդերձեղէնը խորամանկ ժպիտով և նոյն րոպէին ձեռքը դրաւ բաճկոնակի գրպանը, բայց տեսնելով նրա դատարկութիւնը, հանեց այն տեղից իր ձեռքը զգալի անբաւականութիւնով։ Այնուհետև նա դիմեց դէպի բէգը ու հարցրեց։

—Դու ինչ պատասխան ունես քեզ արդարացնելու համար։

—Շատ, պատասխանեց նա. Հասանը ինձ ծաղրածու չինեց. այսպիսի գործողութիւնը արժանի է պատժի և այս պատճառով ես մտադիր չեմ հատուցանել նորան 6,000 պիաստրը։

—Այդ կը վճռվի այն ժամանակ միայն, երբ որ զօրանի հետ կը խորհրդակցեմ, սառնութիւնով պատասխանեց Սէլիմ աղան, և հանելով գրպանից իւղոտած զօրանը՝ սկսեց թերթել այն։

—Ի դէպս, արտաբերեց նա, ընդհատելով զօրանի թերթելը—դու ինձանից ամարանոց էիր կամենում գնել, որի վարձը հատուցանում էիր ինձ 7,000 պիաստր, հիմա վեր առ այն, և ես կը տամ քեզ 10,000-ով։

Լէրովէ-բէգը անբաւականութեամբ ծռեց իր կերպարանքը։ Քո կամքն է, փնթփնթաց նա փոքր ինչ մտածելուց յետոյ։

—Ուրեմն վերջացած է, շտապով հարցրեց կադին։

—Վերջացած է, պատասխանեց տխրութիւնով Լէրովէ-բէգը։

Սէլիմ աղան հենց որ իմացաւ այս՝ նոյն րոպէին սկսեց զօրանից կարդալ վճիռը, ուր ասվում էր թէ՝ ամեն մարդ որ ուղղափառին կաշխատի ծաղրածու դարձնել՝ նա արժանի է սաստիկ պատժի։

—Տեսնում ես, Հասան, ուսերը շարժելով դի-

հել և միշտ գրեթէ անողները եղել են հայ վաճառականներ, ինչպէս անցեալ տարիները մի ժամանակ արին՝ Բալասի Միրզաբէկեան, Ստեփաննոս Թառայեան, Աշուղեաններ և ուրիշ շատերը, որոնց անունները չը պիտի հասարակութենից ծածկվեն։ Բայց այս քանի օրերս մի այդպիսի քաջագործութիւն արաւ մի ինչ որ զարբաղցի Յ. Պ-եան անունով վաճառական որը այս բոպէիս Բագուի հասարակութեան հետաքրքրութեան առարկան է դառել։

Գարնանը Մոսկվայում հաւաքելով մօտ 400 հազարի ապրանք և տեղափոխելով նրան Բագու, Պ. գնում է Նիժնի-Նովգորոդեան տօնավաճառը և այստեղ հրաւիրելով կրեդիտորներին հացկերոյթի,—առաջարկում է նրանց 25 կօպէկ մի բուբլու փոխարէն և խոստանում է մի տարուց յետ տալ ևս 25 կօպէկ։ Կրեդիտորներին՝ առաջին անգամ այդ տարօրինակ առաջարկութիւնը անհաւատալի է թվում, բայց երբ ճշմարտախօս Պ. հաւատացնում է նրանց թէ ինքը ճշմարիտն է ասում, այն ժամանակ նրանք, ի հարկէ, չեն համաձայնվում, չը հաւատալով նրա խօսքերին թէ իբրև ապրանքը բաց թողնելով Բագուի մէջ զտնազան անդրագէտ պարսիկ վաճառականներին, սրանցից ոչ մի ապահովութիւն չէ ստացել և այժմ նրանք բոլորովին հրաժարվում են Պ-եանին իրանց պարտքերը վճարելուց։ Պ-եանը չատ է աշխատում համոզել կրեդիտորներին առաջարկած գումարով բաւականանալ, բայց երբ բոլոր ջանքերը ապարդիւն են մնում և նրան չէ յաջողվում մոլորեցնել պարոտատէրերին, այն ժամանակ նա գալիս է Բագու և այստեղ բոլոր ապրանքները և ուրիշ կայքերը հաստատելով իր աներոջ Վ.-եանի վրա, ինքը աշխատում է արտասահմանեան անցաթուղթ ձեռք բերել և փախչել արտասահման, բայց այդ քայլը ևս չէ յաջողվում նրան, որովհետև այս քանի օրերս հասնելով Բագու յայտնի ֆարբիկանտների՝ Մօրոզովի և Լակունչիկովի հաւատարմատար Զսկոլինսկին արդեզք է դնում Պ—ի ճանապարհորդութեան, քանի որ նա միայն Մօրոզովին պարտ է, ինչպէս ասում են, մօտ 30 հազար բուբլ։

Իսկ ինչ վերաբերվում է Վ.-ին, որի անունով Պ-եանը հաստատել է իր բոլոր կայքը, նա ևս անգործ չէ և ինչպէս հաւատացնում են ամենայն օր մեծ գումարների վէքսելներ է ներկայացնում դատարանին, որոնցով նա իր փեսայից պահանջում է իբրև թէ իրան հասանելի գումարը։

Այդ վէքսէլները ի հարկէ սուտ են և Վ.-եանը այդ անում է լոկ այն մտքով, որ իր փեսայի պարտատէրերին յուսահատացնէ, բայց վերջինները հաստատապէս վճռել են գործը դատաստանի միջոցով առաջ տանել և այժմ պահանջում են օրինաւոր հաշուապահական գրքեր, որ նա օրէնքի համաձայն պարտաւոր էր ունենալ, քանի որ առաջին կարգի վաճառական է։ Ասում են, որ կապած ապրանքներից մօտ 40 հազար բուբլ գումարի ուղարկվել է Լենկորան։

Այդպէս ուրեմն, ինչպէս երևում է, գործը չատ հետաքրքրելի պիտի դառնայ և ես հետևանքի համար կը հաղորդեմ իր ժամանակին «Մշակի» ընթերցողներին։ Հարկաւոր չէ մոռանալ, որ Վ.-եանը մի յայտնի աստիճանի բարոյական դիրք է բռնում հասարակութեան մէջ։ Այդպիսի դէպքերի վրա, իմ կարծիքով, հայ հասարակութիւնը չը պիտի թեթև աչքով նայի, կարծելով թէ նրանք վիրաբերվում են մասնաւոր կեանքին և չունեն ոչ մի հասարակական նշանակութիւն։ Եթէ այսօր հայ հասարակութիւնը քիչ թէ չատ ծանօթ է օտար ազգերին, սրանով մենք մեծ մասամբ պարտական ենք մեր վաճառականներին, որոնք միայն անմիջական յարաբերութիւններ ունեն օտարների հետ և որոնք մի յայտնի աստիճանի ներկայացուցիչներ են համարվում մեր հասարակութեան կողմից։ Սակայն ինչ գաղափար կարող է կազմել օտարազգին հայ ժողովրդի մասին, հանդիպելով այնպիսի անձանց, որոնք կուրացած լինելով նեղ և կեղտոտ շահասիրութեան զգացմունքով, չեն ճանաչում ոչ թէ միայն ազգային, այլ նաև անձնական ինքնասիրութեան գաղափարը։ Հայ հասարակութիւնը առհասարակ և մասնաւորապէս հայ վաճառականները եթէ համամիտ չեն այդպիսիների հետ, պէտք է միշտ թշնամական աչքով նայեն նրանց վրա, թոյլ չը տան նրանց մտնել ոչ մի հասարակական շրջան, անվայել համարեն մինչև անգամ նրանց երեսին նայելը, որպէս զի օտարները չը կարծեն թէ ամբողջ հայ հասարակութիւնը կազմված է վերև յիշվածների նմաններից։ Բագուի հասարակութիւնը կարծես թէ հասկացել է այդ և Պ-եանը այժմ ոչ մի տեղ ընդունված չէ։ Բայց երկար կը տևի, արդեօք, այս արհամարհանքը. մի քանի տարուց յետոյ, հասարակութիւնը չի ընդունի արդեօք դարձեալ նոյն մարդուն, մոռանալով նրա անցեալը։

Շիրվանզադէ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Тифл. Объявл.» լրագիրը լսել է որ այս օրերս Թիֆլիսի փօստատանից գողացել են երկու փողաւոր ծրարներ, որոնցից մինը 1,000 բուբլ, իսկ երկրորդը 5,000 բուբլ գումարով։ Դատաստանական քննութիւն է նշանակված։

—

Գողութիւնները Թիֆլիսում յաճախ են պատահում։ Շատ ժամանակ չէ Երևանեան հրապարակի վրա գտնված Մէկէնչտօկի խանութը անյայտ գողերը կոտրեցին և տարան այնտեղից ոսկեայ իրեղէններ 10,000 բուբլ գումարի։ Իսկ երէկ, հոկտեմբերի 15-ին գողերը կոտրեցին մի խանութ Միջի-Փողոցում։

—

Ֆրանսիացի յայտնի ձեռնածու Կազընեօվի ներկայացումների մէջ ամենից չատ գրաւում են մի կողմից նրա զարմանալի յիշողութեան փորձերը, իսկ միւս կողմից այն որ նա կապել է աալիս իրան մի սիւնակի մօտ, և այդպէս ոտքերը, ձեռքերը, ծնկները և վիզը կապած նըստած է և կարողանում է վառել մի պապիրոս, գոտակը ծածկել գլխին, ածել այլ և այլ գործիքների վրա, ատրճանակից արձակել և մինչև անգամ իրան մօտ, վրանի տակ, հասարակութիւնից ուղարկված մարդու հագուստը, մատանին, ժամացոյցը առնել և մարդուն գետնի վրա դցել, առանց որ իր ձեռքերը կապերից ազատված լինէին, կամ ինքն տեղից շարժվէր։ Դա մի գաղտնիք է թէ ինչպէս է անում նա այդ։ Ոմանք կարծում են թէ նա գործում է էլեկտրական ոյժի օգնութեամբ։

—

Մամուլի տակից դուրս եկաւ և մենք էլ չը նորհակալութեամբ ստացանք Հումպէրտի «Աղքատ մանուկ» գրքոյկի հայերէն թարգմանութիւնը։ Թարգմանողներն են Գ. Խաչատրեանց և Գ. Տէր-Գևոնդեանց։ Դախվում է «Կովկասեան» և «Կենտրոնական» գրավաճառանոցներում։ Հատով գնողների համար գինը 20 կօպէկ է, իսկ գումարով գնողներին զիջումն կը լինի, եթէ ուղղակի դիմեն հետևեալ հասցէով. Тифлисъ, на Авлабаръ Г. Григору Матинянцу.

—

Ստացանք 20 բուբլ պ. Քիւրքճեանին հասցնելու, նրա ֆոտոգրաֆիական ժողովածուի համար պ. Եպիսկոպոս Գրիգորեան Յարութիւնեանցից։

—

«Մշակի» ներկայ համարում ապում ենք մի քանասիրական «Տաճկական տիպերից» վերնագրով, որ Արշակ քահ. Տէր-Ստեփանեանցի թարգմանութիւնն է։

—

«Порядокъ» լրագրի Թիֆլիսի թղթակիցը հերքում է որ պրոֆէսսոր Խվոլսոն քաղաքից տուած ճաշի ժամանակ խօսած լինէր իր ճառի մէջ հայոց ազգի ինքնագոյութեան մասին։ Պրոֆէսսորը խօսել է, ասում է ռուս թերթը, հայոց գրականութեան զարգացման մասին և մինչև անգամ յանդիմանել է հայ հասարակութիւնը որ նա չէ մշակում իր հարուստ անցեալի մտաւոր գանձերը։ Բացի սրանից պրոֆէսսորը յայտնել է մի միտք, որ համակրելի է Կովկասի ամեն ազգութեան համար, այն է որ մեծ պետութեան վնաս չէ, ընդհակառակն օգուտ է, եթէ հպատակ փոքր ազգութիւնները կը զարգանան անհատապէս, կը զարգացնեն իրանց ազգային յատկութիւնները, իրանց գրականութիւնը ու մայրենի լեզուն։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 3 հոկտեմբերի

Թէպէտ մտադիր չէի անցեալ փոստով ևս առանց նամակի թողնել ձեր ընթերցողներին, բայց բաւական յոգնած էի մի քանի մասնաւոր նամակներով և մէկ երկար յօդուածով պ. Մարկոս Աղաբէկեանին պատասխան։ Իմ այստեղ յարուցած տնտեսական խնդրի առիթով անցեալները նա մի շարք յօդուածներ էր գրել «Մասիսին». հարկաւոր էր քիչ խօսել ծերունի պուբլիցիստի հետ այդ մասին։ Պ. Աղաբէկեանի գլխաւոր տեզիսը ապահովութեան խնդիրն էր, որի պակասութիւնից Հայաստանի մէջ, իբր թէ ոչինչ չէ կարելի անել. այս պատասխանը չատերից էի լսած, վասն որոյ հարկաւոր էր բոլորի հաշիւը միասին տեսնել, այդ պատճառով պարտաւորվեցայ անցեալ փոստով ձեզ դրելու փոխանակ. նուիրել ժամանակս մի քանի յօդուածներին, որոնք արդէն երևացին «Մանզումէի» մէջ։ Ապահովութեան խնդրի պոչից բռնողները եթէ ուզում են համոզվել իրանց առաջ բերած փաստերի զարգակութեան մէջ, թող կարդան իմ պատասխանը պ. Աղաբէկեանին, որ կաշխատեմ ուղարկել ձեզ, երբ ձեռք կը բերեմ «Մանզումէի» այն համարները։

Հիմա խօսեմ այն նիւթի մասին, որի վրա մնացի անցեալ անգամ. խօսքս մնաց պ. Կարապետ Փանոսեանի գծագրած պլանի վրա հայոց տնտեսական միութեան համար, որի կազմողը և առաջնորդը, ինչպէս ձեզ յայտնի է, եղաւ այս անգամ ինքը Ներսէս պատրիարքը։

մեց դէպի նա կաղին,— որ Լէբովզ-բէգը բոլորովին արդար է, որ չէ կամենում հաւատացնել քեզ 6.000 պիաստրը։

Ամբաստանողը յայտնելով իր տնբաւականութիւնը, ողբում է անիրաւութեան վրա և յետ է պահանջում իր ընծան։

Սէլիմ աղան հաստատում է, որ նա այն իրեն արդէն ընծայել է, և եթէ որ միւս անգամ էլ կը սկսի ընդդիմութիւնը, կը հրամայի որ իրեն փայտով թակեն։ Զայրացած վաճառականը փախչում է այնտեղից ու կաղին էլ իր կողմից չչնջելով յայտնում է բէգին, որ չուտ բերի նա հաստատութեան թուղթը։

Վերջապէս հերթը հասնում է երկու քրիստոնէից։

Մօտ ժամանակս մենք մի չնչին գործի համար կուռեցինք, սկսում է ամբաստանողը,—կարող եմ հաւատացնել, որ կռիւը Միրկոն սկսեց—ու ես էլ բարկացած գոչեցի «քո մոմերը թող անիծված լինեն», այս պատճառով Միրկոն հանեց դանակը և ինձ վիրաւորեց։ Զորս ամիս անկողնումն էի պառկած ու համարեա մահուան դուռն էի հասած։ Ես պահանջում եմ յանցաւորի սաստիկ պատիժ և 2,000 պիաստր էլ վարձատրութիւն։

—Մօտ արի, ցոյց տուր ինձ վէրքդ, հրամայում է Սէլիմ-աղան։

Հէնց որ ամբաստանողը կատարում է նրա հրամանը, կաղին մեղադրվածից ծածուկ նրան մի յայտնի նշան է ցոյց տալիս։ Ամբաստանողը վախենում է, որովհետև նա իր գործը այնքան հասարակ և պարզ էր համարում՝ որ իր հետ մի հատ պիաստր էլ չի վեր առել, այս անգամ աւելորդ համարելով բաղդիշը։ Բարկացած կաղին հրամայեց նորան յետ կանգնել։

—Միրկո, ցոյց տուր ինձ դանակդ, հրամայեց Սէլիմ աղան։

Կոչվածը արդէն պատրաստվել էր այդ բանի համար, ինչպէս մի փորձված անձ։ Նա հանում և իր կօլանը (գօտի, որի վրա կախված է զէնքը) և դնում այն կադրի ոտների առաջ։ Վերջինը նոյն բոպէին շօշափում է պատեանը և նրա մէջ բացի դանակը գտնում է և քանի մի ոսկեայ դրամներ։ Ինքնաբաւ կերպով ժպտալով նա յարգանքով է դրաւում կօլանն ու դանակը ու վճիռ կարդում։

—Մոմերի անիծելը այնպիսի մի սարսափելի յանցանք է, որ Միրկոն մինչև անգամ իրաւունք ունէր յանցաւորին սպանելու։ Վերջինի գանգատը մերժում է և պահանջում է նրանից դատաստանական ծախսերի վճարը և «դատարանին անիրաւացի կերպով նեղացնելու» համար, նա պէտք է չորս շաբաթ բանտը նստի։ Բայց կարելի է այս պատիժը փոխարինել օրական 10 պիաստր տուգանքով։

Հէնց որ քրիստոնեայքը հեռանում են այնտեղից՝ դարձեալ լսվում է մի խռովութեան ձայն։ Ժողովրդեան մեծ բազմութիւն խմբվում է դատաւորի տան առաջ և դատ է պահանջում։ Ցաճիկը հրապարակից քրիստոնէի օրիորդ է առևանգել և այլ երկու տաճիկների օգնութեամբ անպատուել է նրան իր տանը։ Օրիորդի հօր աղաչանքներից ոտիպված, քրիստոնեայքը ժողովեցին խմբովին, տունը շրջապատեցին, ազատեցին օրիորդին և գերեցին այն երեք առևանգներին։ Բոլոր քրիստոնեայքը թուով մօտ երեսուն հոգի, երդվում են իրանց բողոքի ճշմարտութեան մասին, թշուառ օրիորդը կոծելով, խոստովանվում է իր խայտառակութիւնը, բայց մեղադրված տաճիկը ուրանում է իր արածը։

—Դու վկաներ ունես, հարցնում է նրանից կադին։

—Մուլային և Սուլէյմանը, պատասխանում է մեղադրվածը, կարող են հաստատել հակառակը։

—Վա՛հ, չէ՞ որ դրանք սրա գործակիցներն են, գոչում է բազմութիւնը— դրանք նպաստեցին սրան առևանգութեան միջոցին։

—Մի՞թէ ճշմարիտ է։

—Երդվում ենք ինչպէս ճշմարիտ ուղղափառներ, ոչ, գոչում են տաճիկները։

Ուրեմն դուք ապատ էք, լակոնական ոճով յայտնում է Սէլիմ-աղան։

Ի՞նչպէս երեք յանցաւոր տաճիկների խօսքերին աւելի նախադասութիւն է տրվում, քան թէ երեսուն անկողմնապահ քրիստոնեայ վկաներին, գոչում է յուզված ամբոխը։

—Ղօրանի մէջ ասված է, որ մի մահմեդականի վկայութիւնը աւելի ճշմարիտ պէտք է համարել, քան թէ աշխարհիս բոլոր գեաւուրներինը, հանդարտութիւնով պատասխանում է կադին։— Եթէ կամենում էք որ հաւատամ ձեզ, բերէք չորս մուսուլման վկաներ։

Բազմութիւնը զգալով իր տկարութիւնը և տեսնելով որ բոլորը ի զուր է՝ ցրվում է։ Միայն օրիորդի հայրը գոչում է յուսահատված, այս չը լսված անիրաւութեան դէմ։ Կադին առանց մի վատ խօսքը արտասանելու իր կավասներին (ոստիկանութեան զինուորներ) նշան է տալիս։

—Ալի, Ահմեդ, տուէք այդ անհաւատարիմ շանը 100 վայտի զարկ, այն պատճառով որ՝ դա անպատուեց արդարադատութիւնը։

Թշուառական հօրը կորզում են խելացնորութեանը հասած օրիորդի ձեռներից և առանց յապաղելու ենթարկում են նրան սահմանեալ պատժին, այնուհետև դուրս են գցում նրան շուկայի մէջ անզգայացած և արեան մէջ շաղախված։

Հէնց այն ժամանակ երբ Սէլիմ-աղան մի առանձին ախորժակով վայելում է սուրճը, տուն է մտնում նրա մօտ երիտասարդ տաճիկը և թեթև կերպով բարևելուց յետոյ՝ ասում է։

—Ռեռի, ինձ փող է հարկաւոր էլի, խնդրեմ փոքր ինչ տաս։

—Անպիտան, դու ինձանից ամենաանխիղճ կերպով ես օգուտ քաղում։ Ես չէ՞ որ քեզ յայտնեցի մօտերքումս, որ այսուհետև էլ ինձանից էլ ոչինչ չը սպասես։

—Ինչ արած, ես էլ խօմ չեմ կարող ուրիշին խաբել։ դատաւորի ոչ մի դատարկ աեղ էլ չը կայ....

—Անխիղճ, զգուշացիր որ ես...

—Լաւ, լաւ, քեռի, մի բարկանար, կամենաս գրազ կը դամ քեզ հետ, որ դու այսօր առատ բաղդիշներ չես ստացել և հէնց այդ պատճառով վատ տրամադրութեան մէջն ես։

—Ճշմարիտ է քո ասածը, քթի տակ խօսալով ասում է կադին, ծածկաբար պահելով կօլանը բարձի տակ։

—Գոնէ սովորցրու ինձ, ինչպէս գտնեմ փոքրերը, դարձեալ շարունակեց երիտասարդ տաճիկը։

—Հըմ, հըմ, բացականչեց կադին փոքր ինչ մտածելուց յետոյ— ինչ կը լինէր եթէ դու համաձայնվէիր ձեռք բերել հացը սուտ վկայութեան միջոցով։

—Ես ինքս էլ էի մտածում դրա մասին, պատասխանեց նա,—բայց բաւականին մեծ է այդ մասին հակառակորդների թիւը....

—Ինչ որ կը վերաբերվի այդ արդելքին, քո կողմը այն գերազանցութիւն կայ, որ դու իմ քրոջս որդի ես։ Կացիր ինձ մօտ և առաջարկիր քո վկայութիւնը գանգատվողներից այն կողմին՝ որ հարուստ է։

—Վատ չէ, բառանչում է մտածելով երիտասարդը։

—Դու չուտով կունենաս առիթ սկսելու քո գործունէութիւնը։ Ահա գալիս են երկուսը։

Ես ճշմարիտ որ տանը մօտեցան երկու քրիս-

Ուրեմն տնտեսական խնդիրը, որի երեսն գալու վրա կարծեմ մինչև հիմայ ես շարունակում է մասնարութիւններ անել Թիֆլիսի մի «փորձառու», «չրջանկատ» և «ամենագէտ» խմբագիր, արդէն հանդիսաբար ճանաչված է ինչպէս խիստ լուրջ, ժամանակակից և պատեհաւոր խնդիր, այնչափ պատեհաւոր, որ ինքը պատրիարքը ցայտեց տեղից ու պարագլուխ կանգնեց հանրակութեան, եօթն ամիսէ ի վեր լրագիրների էջերը զբաղող այս սանիպողական հարցը իրականացնելու ու կարգադրելու համար։ Յուսով ենք, որ այսուհետ ես Թիֆլիսի «փորձառու» և «չրջահայեաց» լրագիրը չի դադարի իր իմաստալից կարծիքները յայտնել և բազմահմուտ խրատները տալ տնտեսական հարցի «վաղահասութեան», «տարաժամութեան», «ապարդիւնութեան» և «երևակայական» լինելու վրա. ամեն մարդ մի դեր պիտի կատարէ, վասն որոյ չը պիտի բնաւ զարմանանք որ մի խմբագրի պաշտօնն էլ երեսուն տարվայ մէջ մասնարութիւնը ու պառաւախօսութիւն է եղել...

Պ. Կարապետ Փանոսեանի առաջարկած միտքը հետևեալումն է կայանում. որովհետև մինչև հիմայ Կ. Պոլսի մէջ եղած ընկերութիւնները բոլորն էլ հիմնված են եղել միայն ողորմութեան ու նուիրատուութիւնների վրա, որոնց դրդիչը եղել է լոկ բոպէական զգացմունքը և եռանդը. վասնորոյ այդ ընկերութիւնների գործը և տեղականութիւնը միշտ խախուտ և չարժուն հիմքի վրա է եղել։ Հետևաբար այդ ընկերութիւնները եղել են միայն ժամանակաւոր, անցողական և առանց արդիւնաւոր ու իրական հեռաքիրի։ Բայց այդ իրաքանչիւր ընկերութիւն հայոց մէջ գործել է գրեթէ միշտ միայն լեզուապաշտպարական միջոցներով, քան թէ չոչափելի և նիւթական կերպով, որից առաջ է եկել այն, որ գործող անձինքները փոխանակ վաստակի, աշխատութեան և ինքնօգնութեան օրինակ ցոյց տալու թարմ և մատաղահաս սերունդին, միայն պառաւախօսութեան, դարդակ վիճաբանութեանց և խմաստակ փիլիսոփայութիւն անելու օրինակ են ցոյց տուել։ Ի նկատի ունենալով այս ամենը, պ. Փանոսեանը առաջարկում է հիմնել տնտեսական մի ուրիշ ոչ գանազան ժողովների, ատեանների, խորհրդարանների, մանախումբերի և յանձնախումբերի վրա, այլ լոկ հողի երեսին կայնը, ցաքնաղը, բարը ու արօրը բռնեցնող մի մեծ համայնքի վրա։ Իսկ այս նպատակին հասնելու համար սրամիտ ինիցիատիվը առաջարկում է գործունէութեան ասպարէզը չինել Կ. Պոլսի սահմանագծին կից գտնվող մի լայնատարած հողը, որի ընդարձակութիւնը մօտ հինգ կարայազի դաշտի չափ է։ Այդ հողերը հայոց հիւանդանոցին պատկանող ազգային հողերն են, որոնց մեծագոյն մասը Երուսաղէմին կը պատկանին, իսկ միւս մասը ազգային հիւանդանոցին. դրանց միջով անցնում է երկաթուղի, որը տանում է մի կողմից դէպի Բումելիա, իսկ քաղաքի կենտրոնի հետ հաղորդակցութիւն ունենալու համար բացի այդ երկաթուղին, կայ նոյնպէս և ծովային կէս կամ մի ժամուայ ճանապարհ, եթէ միայն մի փոքրիկ նաւամատոյց չինվի յիշեալ հողերի եզերքին, որոնք արդէն ծովեզերեան են։

Պ. Փանոսեանը առաջարկում է այդ հողերի վրա հիմնել մի ընդարձակ տիպար ագրարակ (образцовая ферма), իր բոլոր գիւղատնտեսական ճիւղերով. օրինակ, այդտեղ պարապվեն և անասնաբուծութեամբ ու ձիերի տեսակները լաւացնելով ու աճեցնելով, և հաւապահութեամբ, և պարտիզպանութեամբ, և անտառաբուծութեամբ, և պանիր, լեղ ու ուրիշ անարարական պիտոյք պատրաստելով, և հիւսնութեամբ, և երկաթագործութեամբ, և տան կարասիք ու ուրիշ մթերք պատրաստելով։ Մէկ իսօքով դա պիտի լինի մի յաջողացրած համայնական ընկերութիւն, որի առաջի կապիտալը պիտի լինի ոչ որ և իցէ դրամական նուիրատուութիւն ու ազգասիրական պառաւախօսութիւն, այլ լոկ ֆիզիքական ու մտաւոր արդիւնաւոր աշխատութիւն։

Ի հարկէ այս տեսակ մի լայն ձեռնարկութիւն սկսելու համար հասարակութիւնը պիտի ունենայ սկզբնական գոնէ մի կէս միլիոն ռուբլի դրամագլուխ, որով հաստատվի ազգի ձեռքով կազմված լաւ եւրոպական ագրիկուլտուրայի և կարգ ու կանոն։ Այդչափ գումարը հեշտութեամբ ձեռք բերելու համար յարգելի ինիցիատորը առաջարկում է ծախել մի հին մեծ հայոց գերեզմանատուն, որի միայն մարմարեայ քարերը մօտ 20 հազար ռուբլի փող կարժեն. իսկ հողի հետ միասին առ նուազը երեք հարիւր հազար ռուբլի։ Մնացած երկու-երեք հարիւր հազար գումարը առաջարկում է ձեռք բերել Նորերս Մշակի մէջ պ. Աբասխանեանցի առաջարկած վիճակահանութեան ձևով։ Բացի այդ պ. Փանոսեանը ցոյց է տալիս և մի քանի ուրիշ աւելի հեշտ և աւելի գործնական միջոցներ։

Ուրեմն երբ մի անգամ ձեռք բերվեց այդ գումարը, որի համար էլ ոչինչ դժուարութեան տեղիք չը կայ, այն ժամանակ անմիջապէս կը հրաւիրվեն Եւրոպայից ձեռնհաս մասնագէտներ մանրամասն պլանը կազմելու և գործը կարգի գցելու ու սարքելու համար։ Ի հարկէ ամեն ինչ կարող է և միանգամից չը սարքվիլ, այլ կամաց կամաց ու աստիճանաբար։ Իսկ երբ գործունէութիւնը սկսվեց և ագմինիստրացիայի մեքենան շարժվեց, այդ ժամանակ անմ ինչ տեսարան կը բացվի մեր աչքի առաջ. Կ. Պոլսի մէջ գտնվող բոլոր ազգաստ մարդիկ, կին թէ այր, փոխանակ հազարներով Բումելիա, Բոլգարիա կամ ուրիշ տեղ մի կտոր հաց գտնելու համար ցրվելու, փոխանակ հազարներով պառնիկութեան գիրկը ընկնելու, փոխանակ հազարներով ամեն տեսակ աֆերիստական և ապօրինի միջոցների դիմելու, կը ժողովվեն այդ գործունէութեան լայն դաշտի վրա և իրաքանչիւրը կը պարապվի այն գործով, որին ընդունակ կը լինի և հակում կունենայ. պարապ չեն նստի նաև այն հարիւրաւոր չքաւոր մարդիկ, որոնք թափված են ազգային անկելանոցի մէջ, ինչպէս բանտարկեալներ մի կտոր պատրաստ հացի համար։ Աշխատողներից իրաքանչիւրը կը ստանայ ի հարկէ վայելուչ վարձատրութիւն, որով նա կարող կը լինի ոչ միայն իրան ապահովել, այլ ևս չափաւոր խնայողութիւն էլ յետ գցել։ Իսկ սոցա աշխատութիւնների արդիւնքը կը ցրվի և կը վաճառվի ոչ միայն Կ. Պոլսի մօտ մի միլիոն ժողովրդի մէջ, այլ կը տանվի երկաթուղիով և ծովով սար ուղեն՝ Բումելիա, Բոլգարիա, Յունաստան և նաև Աւստրիա։

Այսպիսով մի կողմից այստեղ գտնվող տասնեակ հազարաւոր բեռնակիրները գործ և փող ճարելով և որ և իցէ մի գիւղատնտեսական նուրութիւն սովորելով կը վերադառնան հայրենիք. միւս կողմից Կ. Պոլսի մօտ երեք հարիւր հազար հայ բնակիչներից գոնէ հարիւր հազարը, գոնէ յիսուն և քսան հազարը որոշ և մշտական պարապմունք և հաստատ ու հալալ հացի աղբիւր կունենայ և այսպիսով կամաց կամաց Կ. Պոլսի բոլոր տնտեսական ու նիւթական կարգութիւնը և այժը յոյներից և հրէաներից կանցնի հայերի ձեռքը. Կ. Պոլիսը կը լինի մի մեծ գործարան և ֆակտորիա այն բերքերի և ապրանքների, որոնք կը գան Հայաստանից և արդիւնագործվելով այս մեծ լաբորատորիայի մէջ, կը վաճառվեն օտարներին։ Իսկ ագարակից էլ ստացած արդիւնքով կարելի կը լինի նմանապէս Հայաստանի մէջ բանկեր բանալ, կալուածներ առնել և այլն։ Ահա սա է իր գլխաւոր կէտերի մէջ «Մասիսի» խմբագիր պ. Կարապետ Փանոսեանի առաջարկած պլանը հայոց տնտեսական մեծ միութեան կազմակերպութեան համար, որի մէջ չը կայ ոչ ողորմութիւն հաւաքելու, ոչ երեսփոխան լինելու, ոչ քուէարկութեամբ ու դարդակ պառաւախօսութիւններով պարապվելու տեղիք, այլ կայ միայն գործ, աշխատութիւն և հաստատ հողային արդիւնաբերութեան աղբիւր. որն է գովելին, դժուար չէ դնահատելը։ Հիմայ կը մնայ միայն մինչև վերջը լսել պ. Փանոսեանի բացատրութիւնները իր մանրամասնութիւնների մէջ, որ հազիւ թէ տասը մեծ յօդուածներով կը վերջանան, որ կարելի լինի վերջնական առարկութիւններ անել դեր և դէմ, եթէ այն էլ միայն որ և է առարկութիւններ անելու տեղիք մնայ յարգելի պուբլիցիստի ասածների դէմ։

Եկող անգամ կը գրեմ այս անընկճելի աշխատողի և հրապարակախօսի քսան տարվայ գործունէութեան մի քանի կէտերը, որ չափից դուրս հետաքրքիր են և հրահանգիչ. միայն նախապէս իմացէք, որ այս կորովի գործիչը և անվհատ աշխատողը Կ. պոլսեցի չէ, այլ ինքնարոյս և ինքնօգնութեամբ յառաջ եկած մի կեսարացի տոկուն հայի տիպ։

Գրիգոր Նիկողոսեան

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 հոկտեմբերի։ „Порядокъ“ լրագիրը հաղորդում է. Պետական խորհրդի նիստում հողերը յետ դնելու վճարքների մասին էկսպերտների փոքրամասնութիւնը բաւական դրական ապացոյցներ ներկայացրեց, որ անհրաժեշտ է վճարքների չափը որքան կարելի է փոքրացնել։ Սիբիրյի մէջ ռուսական և բուժական հրէաների գաղթականութիւն հիմնելու մասին նախագիծը ընդունվեցաւ քաղաքական մասնաժողովից և ներկայացրած է սուլթանին հաստատելու համար։ „Новое Время“ լրագիրը հաղորդում է. հոկտեմբերի 14-ի նիստին էկսպերտները քննում էին գաղթականութեան պատճառները։ Գաղթականութիւնը պատմական բնական երևոյթ է ճանաչված, որի պատճառը տնտեսական դրութիւնն է։ Առերես միջոցները անփախչելի չարիք են կազմում։ Անհրաժեշտ է գաղթականութեան պատճառների առաջն առնել, իսկ առ այժմ նրանց արգելելը բոլորովին անկարելի է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

տունեայք և թոյլ տուին նրանց դատաւորին ներկայանալու։

—Ի՞նչ էք կամենում, հարցրեց նրանց Սէլիմ-աղան։

—Արդարադատութիւն, տէր, գոչեց նրանցից մէկը։

—Ոչխարներս հօտը գիտամբ մտել էր այս խաբեբայ—Միլոյիկոյի դաշտը, որ հիմայ պահանջում է ինձանից իմ սեպհականութիւնս և հաստատում է, որ հօտը իմը չէ եղել, այլ ինքը գնել է այն Գակոյում։

—Ունես վկաներ, որ ներկայ եղած լինեն ոչխարները գնած միջոցին, հարցրեց կադին։

—Ո՛չ, ես վկաներ չունեմ, բայց ահա պայմանագիրը, որ կարող է հաստատել իմ ասածս։ Այս ասելով Միլոյիկոն դատաւորին առաջարկում է խտակ թղթի թերթը և նոյն րոպէին ճարպիկութիւնով գնում է նրա ձեռքը քանի մի ոսկեայ դրամներ։

Վերջինը ոչ սակաւ ճարպիկութիւնով թաղցնում է բաղշիշը և այնուհետև չուռ ու մուռ տալով թերթը և գննելով ամեն կողմից՝ ասում է ծանր կերպով։

—Դու սխալվում ես, այս թերթի վրա ոչինչ չէ գրած։

Միլոյիկոն գունատվում է և շուարված չգնում է քանի մի ներողութիւններ։

—Առանց վկաների ես քեզ չեմ կարող արդարացնել, սառնութիւնով պատասխանեց կադին։

—Մարգարէի մօրուսով եմ երդվում, յանկարծ գոչում է դատաւորի քրոջ աղան,—որ եթէ ես չեմ սխալվում, կարծում եմ դա նոյն Միլոյիկոն է, որ ինձ 1,000 պիաստր է պարտ։ Ես վկայում եմ, որ դրան ես Գակոյում տեսայ ոչխարներ գնելիս. Միլոյիկոն նոյն րոպէին հասկանում է բանի էութիւնը։

—Ճշմարիտ է, հիմայ ես ճանաչում եմ քեզ, գոչում է նա։ Միայն եթէ քո միտդ էլ է, ես քեզ պարտական եմ ոչ թէ 1,000 այլ 800 պիաստր։ 200 ես քեզ նոյն րոպէին հատուցի, երբ ներկայ էիր ոչխարներս գնելիս։

—Ճշմարիտ է, ես փոքր էր մնում, որ մոռանայի դրա մասին, հաւատացնում է քրոջ աղան։

—Ուրեմն տուր ինձ իմ 800 պիաստրը։

Միլոյիկոն հպատակվելով հանեց իր քսակը։

—Կարող ես երդվել որ, իսկ և իսկ դու ներկայ էիր ոչխարի հօտը գնելիս, սառնութենով հարցնում է Սէլիմ աղան իր քրոջ որդուն։

—Երդվում եմ։

—Ուրեմն, գործը վերջացած է, գանգատվող. վճարիր դատարանական ծախսը։

—Բայց այս վկան ամենևին չէ եղել Գակոյ, յուսահատված գոչում է դատապարտվածը։

—Մուսուլմանի վկայութեանը չէ կարելի հակառակվել, սառնութենով նկատում է կադին և երկուսին էլ առաջարկում է հեռանալ։

—Սկիզբը վատ չէ, ասում է Սէլիմ-աղան, համարելով ստացած ոսկիքը։

—Զորս լիրա. կը նշանակի 400 պիաստր բաղշիշ, տես դու երկու անգամ ինձանից աւելի ստացար, սուտ վկայութեանդ համար։

Հէնց որ կադին հրամայում է պատրաստել իր զալիանը, երևում են դարձեալ երկու գանգատաւորներ, տաճիկ ու քրիստոնեայ։

Այս անգամ մեղադրողը տաճիկն է։

—Գեաւուր ինձ իր տունը ընծայեց ու հիմայ էլ չէ կամենում տալ ինձ, սկսեց նա իր գանգատը։

—Դու սուտ ես խօսում, ես դրա մասին մինչև անգամ չեմ էլ մտածել։ Ճշմարիտ է, գանգատվողը շատ էր ցանկանում ունենալ իմ տունս, և ես միայն ասացի թէ մթթէ ես յիմար եմ որ իմ տունս թիւրքին բաշխեմ։

—Մթթէ դու համարձակվեցար, մեր մօտ սուլմանների դէմ արտասանել այդպիսի արհամարհանք, որտեղ է նրա վրա Սէլիմ-աղան։ Ալի, Ահմեդ, տուէք այդ շանը մի քանի փայտի զարկ։

Հէնց որ թշուառ Բային դուրս են տանում սենեակից դատարանի վճիռը կատարելու, կադին դիմում է մեղադրողին այս հարցմունքով։

—Քանի բաղշիշ կը տաս։

—Հազար պիաստր։

—Ցիմար, տունը 10 հազար արժէ։

—Լաւ, ուրեմն երկու հազար։

—Ո՛չ 5,000 ինձ. իսկ 3,000 իմ քրոջս տղային, որ յոգուտ քեզ ցոյց կը տայ դործը։

—Դա չափազանցութիւն է։

—Ամեմա, ինչ դարձեալ մնում է 2,000 պիաստր։ Եւ եթէ դու չես համաձայնվի, ես քեզ վրա բացի այն, որ մեծ տուգանք կը գնեմ, կը հրամայեմ էլ որ քեզ մի լաւ էլ թակեն։

—Լաւ, համաձայն եմ։

Հէնց որ համաձայնութիւնը վերջացաւ՝ խեղճ քրիստոնեային տուն բերին դատարանը։

—Ես հարց ու փորձ արի այս վկային, ասում է Սէլիմ-աղան,—և սա երդվում է որ ներկայ է եղել ձեր դաշնադրութեանը։

—Դա երդմնազանց է, գոչում է յուսահատված քրիստոնեան։

—Ուղղափառին անպատուողին յիսուն փայտ զարկ, լակոնական ոճով հրամայում է կադին և փայտ ինտերմէցցօն միւս անգամ ընդհատում է դատաստանական ատեանը։

—Խոստովանում ես հիմայ, հարցնում է կադին, կարգապահութիւնը վերջացնելուց յետոյ։

—Այո, ես ընծայում եմ սրան իմ տունս, չգնում է թշուառը։

—Ուրեմն քո խօսքերից երևում է, որ դու յիմար ես, ասում է Սէլիմ-աղան, և արժանի ես մի ամբողջ տարի բանտարկվելուն։ Բայց ինչպէս առանձին մի ողորմութիւն, ես փոխարկում եմ բանտարկութիւնդ 3,650 պիաստր տուգանքի։

—Ես համաձայն եմ, բացականչում է պատժվածը։

—Այսօր գեղեցիկ օր է, նկատում է Սէլիմ-աղան, գանգատվողների դուրս գնալուց յետոյ։ Բայց այն ինչ է դարձեալ։

—Ջապտիաները (ժանդարմները) բերում են մագործ տաճկին, որ մեղադրվում էր կշռի ծռելում։

—Թող իր տան դրան վրա ականջիցը կախ տան մի ժամով, կարդում է նա հակիրճ նախնական վճիռը։

Վերջաբանութիւն։ Երբ որ մագործը կանգնեց ոտների մատների վրա և նրա ձախ ականջը այն դրութեան մէջ կախեցին դռներից, նրանից չէ հեռանում դատին։ Մագործը նրան բաղշիշ է խոստանում, որ նա իր ոտների տակ քար դնի։ Զապտիան վեր է առնում փողը և նրա ոտների տակ դնում է մի ամենափոքրիկ քար։

Սկսվում են նոր պայմանագրութիւններ, որ վերջանում է նրանով, որ զապտիան վերջապէս համաձայնվում է նրա ոտների տակ դնել մեծ քար 1,000 պիաստր ստանալուց յետոյ, այնպէս որ նրան էլ հարկաւոր չի լինի մատների ծայրերի վրա կանգնել։

Ա. Բ. Ն. Ս.